ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 7 >> Մարտի 2017թ. N 12

ք. Արմավիր

<<ԱՐՏԱՇԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՈՒՆՄԱՆ-ՀԱՆՁՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2017 թվականի մարտի 6-ի N 102-Ա և 2017 թվականի մարտի 6-ի N 103-Ա որոշումները, <<Արտաշարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում գույքի և փաստաթղթերի հանձնման–ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

կարգադրում եմ՝

1.Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել <<Արտաշարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Լարիսա Ավետիսյանին (համաձայնությամբ):

3.Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել եռօրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ***Լ. ՄՈՒՐԱԴՅԱՆ***

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի

մարզպետի 2017 թվականի Դեկտեմբեր 7-ի

N 12 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ն. Սարգսյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ:

Անդամներ՝

Ս. Ղուկասյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ:

Հ. Ասոյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի առաջատար մասնագետ:

Հանձնող՝

Կ. Հարությունյան - << Արտաշարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար

Ընդունող՝

Տ. Հակոբյան- << Արտաշարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ